74. ԾՈՆԸ ՆԱՆ ԿՅՈ̈ՒԼԸ ՈՒ̈ՐՈՒ̈Ր ՆՀԸԵՏ ԽՈՍՈՒՄ ԻՆ

Օվչի Փիրումը հիշքան հեյվան, կյո̈ւլ, կյեզան կա, լոխճինին լո̈ւզին գյիդա̈լիս ա ինո̈ւմ։ Մին օր մին տան ղոնաղ ա ինգյո̈ւմ, ուրո̈ւգյո̈ւնը կյո̈ւլին օռնուցը նան տնատըեռնը շանը հա̈չուցը ըն-ջուկավն ա ինգյո̈ւմ։ Կըլո̈խ ա ինգյուում, վըեր կյուլը շանն ասում ա.—Սովա̈ծ մըեռնում ըմ, տու քու տըեռնը տըռնան ղըաղ կաց, մին վըեխնճար տանեմ օտըեմ։ Շոնն էլ ասում ա.—էս ո̈ւրո̈ւգյո̈ւնն իմ տարըս վըեխնճար ա մուրթըլական, թա իմ փայըս ինձ տան օտըեմ, ըստըղերքաս մուտանաս վուչ, թա մըսան ինձ փայ չի տան, ես հեռու վըմ կընենական, կըկյաս նի մննես վըխճըրներեն մաչը, լոխ կուտորես։

Ո̈ւրո̈ւգյո̈ւնը տնատարը վըեխնճար ա մորթում, օվչի Փիրումն ասում ա.—Վըխնճարեն կեսը տո էն շանը, վըեր ես քու հացատ կըտրեմ։ Տնատարը վըխնճարեն կեսը տամ ա շանը, շոնը մին լավ օտում ա, վըխճըրներեն ղալեն քըշտին նստում։ Կյո̈ւլը կյամ ա, ասում.—Գա հինչ տըե՞ռավ, սովա̈ծ մըեռնում ըմ։ Շոնն ասում ա.—Կո՛րի, ղըա՛ղ քաշվի, թա չէ քեզ մուրթըհան կանըեմ։ Կյո̈ւլը փասա̈-փո̈ւսա̈ն հըվաքում ա, հղե ինո̈ւմ։